

«Հաստատում եմ» _____

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական
համալսարան» հիմնադրամի ռեկտոր
տեխ.գիտ.դ., պրոֆեսոր Ռ.Ռ. Սահակյան
15.06 հունիսի 2022թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒԹՅԱՆ

*Նարե Կայծերի Հակոբյանի «Տեղեկատվական և խոսքարկման գործառույթների
հարաբերակցությունը անզլերեն գիտական դիսկուրսում» թեմայով Շ.02.07
«Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ*

Նարե Կայծերի Հակոբյանի «Տեղեկատվական և խոսքարկման գործառույթների
հարաբերակցությունը անզլերեն գիտական դիսկուրսում» թեմայով ատենախոսությունը և
սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի
«Օտար լեզուների և գրականության» ամբիոնի նիստում (Արձ. թիվ 16, կայացած՝
13.06.2022 թ.):

Մասնակցում էին «Օտար լեզուների և գրականության» ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ., դոցենտ
Թ.Վ. Թադևոսյանը, դասախոսներ՝ Բ.Գ.Թ., դոցենտ Լ.Յ. Վարդանյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Ն.Ա.
Ջաղինյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Ս.Ս. Բաբայանը, Բ.Գ.Թ., դոցենտ Կ.Ս. Առուստամյանը, Բ.Գ.Թ.,
դոցենտ Ժ.Լ. Ալոյանը, Բ.Գ.Թ., ասիստենտ Ա.Կ. Դանիելյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Գ.Լ.
Դոխոյանը և ուրիշներ:

Գրախոսման ներկայացված ատենախոսությունը յուրօրինակ փորձ է ուսումնասիրելու
և վերադիտարկելու խոսքաստեղծման և խոսքըմբռնման գործընթացը գիտական
դիսկուրսում, սահմանելու խոսքարկման և տեղեկատվական գործառույթների
հարաբերակցությունը և բացահայտելու վերջիններիս փոխհարաբերության արդյունքում

ձևավորված ժանրաստեղծ հասկանիշներն ու դրանց նշանակությունը անգլալեզու գիտական տեքստերի ստեղծման և ընկալման հարցում:

Հայտնի է, որ վերջին տասնամյակներում բնական գիտություններն ավելի ու ավելի են դիմում լեզվին և դիսկուրսին՝ իբրև գիտական վերլուծության մեթոդաբանական հիմնավորում: Բնական գիտություններն այն ոլորտն են, որտեղ տեղեկատվությունը մատուցելիս դասախոսը տեղեկույթի ակտիվ մատուցողն է, իսկ լսարանն՝ այն ընդունողը: Ընդ որում, ներակայացվող տեղեկատվության ծավալը գիտական դիսկուրսի յուրաքանչյուր տարատեսակի և յուրաքանչյուր ժանրային դրսևորման համար տարբեր է: Ուստի գիտական դիսկուրսում խոսքաստեղծման և խոսքըմբման գործընթացում կարևոր դեր է խաղում միջտեքստայնությունը, որը հիմնականում դրսևորվում է մեջբերումների, խոսքարկային արտահայտությունների, հղումների և այլնի միջոցով: Գիտական տեքստերի ստեղծման հարցում մեծ է նաև հանրա- և արտալեզվական գործոնների դերը, որոնց բացատրությունը հնարավոր է գտնել գործաբանության մակարդակում: Սա թույլ է տալիս հաղորդակցության գործաբանական առանձնահատկությունները դիտարկել որպես գիտական դիսկուրսում լեզվական միջոցների ընտրությունը և դրանց համապատասխան գույակցումը պայմանավորող երևույթ: Մույն աշխատանքում որպես լեզվական միավորներ ընտրվել են խոսքարկային արտահայտություն համարվող հարցական նախադասությունները (OK? Alright? Right?) և ոչ-խոսքարկային հարցական նախադասությունները (հատուկ, ընդհանուր և զեղչված անդամով):

Ատենախոսությունն ամուր մեթոդաբանական հիմքն են կազմում հաղորդակցության տեսությանը, դիսկուրսի կառուցվածքին և բազմաեղանակային վերլուծությանը նվիրված աշխատությունները: Գիտական հաղորդակցության տարբեր ժանրերում խոսքարկման և տեղեկատվական գործառույթների հարաբերակցության հետազոտությունն իրականացվել է կորպուսային, ժանրային, բազմաեղանակային և երկխոսության վերլուծության մեթոդների և մոտեցումների համադրմամբ:

Ուսումնասիրության առարկան այն լեզվական միավորներն են, որոնցում լավագույնս են դրսևորվում խնդրո առարկա գործառույթների հարաբերակցությունը: Նյութի համակողմանի քննության նպատակով կազմվել է 70 դասախոսությունից և 26 գիտական

հողվածից բաղկացած կորպուս: Ակնհայտ է, որ ատենախոսն ուսումնասիրել է բավականին ծավալուն տեսական և գործնական նյութ, որը և ներկայացված է աղյուսակների և գծապատկերների տեսքով, որոնք մեծապես նպաստում են քննարկվող խնդիրների լուսաբանմանն ու մեկնարկմանը: Պարզ է, որ ատենախոսը գտել է այն գիտական բացը, որն առկա է խոսքարկման գործառույթում և շնորհիվ բազմաեղանակային վերլուծության առաջադրել է հարցական նախադասությունների նոր դասակարգում, որն էլ ապահովում է աշխատանքի գիտական նորույթը:

Ատենախոսության մեջ կատարված աշխատանքը դրական արժևորելով՝ այնուամենայնիվ, կցանկանայինք նշել որոշ դիտարկումներ և ստանալ որոշ պարզաբանումներ:

1) Խոսքը միշտ իրականացվում է ձայնի այս կամ այն ելևէջավորմամբ: Անգամ միապաղաղ խոսքը, որը հատկապես հատուկ է գիտական դիսկուրսին, ձայնային որոշ նրբերանգներ է ունենում արտաբերվելիս: Կենդանի խոսքն այս կամ այն չափով արտահայտում է հաղորդողի տրամադրությունը և վերաբերմունքը՝ իրադրությամբ թելադրված իրողության նկատմամբ: Ուստի կարևոր է ուշադրության կենտրոնում պահել խոսքի բովանդակությամբ կամ հաղորդանյութով պայմանավորված ձայնային ելևէջների ներդաշնակ համակցությունը՝ հնչերանգը, որն իր բազմաշերտ իմաստային և գործաբանական առանձնահատկություններով ավելի ցայտուն է դրսևորվում երկխոսություններում: Կարևորելով հնչերանգի՝ որպես խոսքի շղթայի ռիթմիկական մեղեդային կառուցվածքի դերը հաղորդակցման գործընթացում, կցանկանայինք, որ ատենախոսը պարզաբաներ, թե ինչո՞վ է պայմանավորված OK? Alright? և Right? խոսքարկային արտահայտությունների ընտրությունը միայն որպես հարցեր և արդյո՞ք ավելի խորությամբ չէին բացահայտվի այդ հարցերի գործառական կիրառությունը հատկապես երկրորդային դիսկուրսում, եթե դրանք համադրվեին նույն խոսքարկային արտահայտությունների (հատկապես OK-ի) այլ իմաստային և հնչերանգային տարատեսակներին: Մեր կարծիքով՝ նման մոտեցումը ավելի կոյուրացներ և հիմնավորեր խնդրո առարկա խոսքարկային արտահայտությունների բազմագործառությայնությունը, հատկապես երբ խոսքը վերաբերում է պատասխան չպահանջող հարցերին:

2) Կցանկանայինք, որ ատենախոսը մեկնաբաներ դասախոսությունների ընտրությունն առանց մասնագիտական (դասախոս-ուսանող) երկխոսության, որն ապահովելու դեպքում կունենայինք հաղորդակցական իրադրության ամբողջական կադապարը ոչ միայն ներլեզվական իմաստային (լոկուտիվ՝ ասույթի նշանակությունը), այլ նաև արտալեզվական (իլլոկուտիվ՝ ասույթի հաղորդակցական դիտավորությունը և պերլոկուտիվ՝ խոսքային ազդեցությունը) տարրերով: Հաղորդակցության մասնակիցների հարաբերակցությունը և մասնավորապես՝ հաղորդակցական դերերի հերթագայությունը ավելի կընդգծեր ասույթի նպատակաուղղվածությունն ու գործաբանական ուժը, ինչպես նաև ասույթի և համատեքստի փոխազդեցությունը:

3) Մեր կարծիքով՝ ատենախոսի կողմից առաջադրված հարցական նախադասությունների նոր դասակարգումը կունենար ավելի մեծ կիրառական և գործաբանական արժեք, եթե ատենախոսը ցուցաբերեր ավելի ընդգրկուն և տարբերակված մոտեցում՝ դասակարգելով հարցերը ոչ միայն ըստ հաղորդակցական նպատակաուղղվածության (պատասխան չպահանջող առանց դադարի հարցեր (58,3%), պատասխան չպահանջող դադարով հարցեր (26,6%), պատասխան պահանջող դադարով հարցեր (10,4%) և պատասխան պահանջող առանց դադարի հարցեր (4,7%)) և ըստ գործառույթների (կենտրոնացնել ուշադրություն մտքի կարևորության վրա, հաստատել նախորդող մտքի ճշմարտացիությունը, ստեղծել ներգրավվածության տպավորություն, չինչել գերիշխող և այլն), այլ նաև դրանց գործածության հաճախականության բաշխվածության դասախոսությունների և գիտական հոդվածների երեք հիմնական հատվածներում (ներածություն, հիմնական մաս, եզրակացություն):

Կարծում ենք, որ նման գիտական բացերի առկայությունը գրեթե անխուսափելի է ցանկացած գիտական աշխատանքում, իսկ գրախոսվող աշխատանքում դրանք ամենևին որակ չեն կազմում և չեն նսեմացնում Նարե Հակոբյանի կատարած գիտական հետազոտության արժեքը: Սույն ատենախոսությունը բավականին ընդգրկուն և գիտական առումով արժեք ներկայացնող հետազոտություն է, ինչի շնորհիվ ատենախոսությունն ունի տեսական և գործնական նշանակություն: Ատենախոսության հիմնադրույթները արտացոլված են սեղմագրում և ատենախոսի հրապարակումներում:

Ընդհանուր առմամբ ատենախոսությունը գրված է գրագետ անգլերենով, հստակ ձևակերպումներով և առանց ավելորդաբանությունների: Հեղինակը ցուցաբերել է գիտական աշխատանքով զբաղվելու կարողություն, թեկնածուական ատենախոսությունը իր հրատապությամբ, գիտական նորույթով և գործնական նշանակությամբ լիովին բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն իրավամբ արժանի է իր կողմից հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Այս ամենը հիմք է տալիս միջնորդելու ԵՊՀ գիտական աստիճաններ շնորհող «009» մասնագիտական խորհրդի առջև՝ Նարե Կայծերի Հակոբյանին շնորհելու հայցվող գիտական աստիճանը Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտության գծով:

ՎՊՀ «Օտար լեզուների և գրականության»
ամբիոնի վարիչ, Բ.գ.թ., դոցենտ՝


Թ.Վ. Թադևոսյան

Հաստատում եմ Թ.Վ. Թադևոսյանի ստորագրությունը:

ՎՊՀ գիտական քարտուղար, մ.գ.թ., դոցենտ՝
15.06.2022թ.

 Ս.Ա. Բեժանյան